**Համատեղ հայտարարություն**

**Պետություն-Քաղաքացիական հասարակություն հակակոռուպցիոն աշխատանքային հարթակի և հակակոռուպցիոն աշխատանքային խմբերի ստեղծման մասին**

**Քաղաք Երևան** **23.09.2015թ.**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, որպես հակակոռուպցիոն ոլորտի պետական լիազոր մարմին, մի կողմից, Քաղաքացիական հասարակությունը, ի դեմս ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի՝ Կոալիցիայի քարտուղարության համակարգող, հիմնադիր անդամ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և Կոալիցիայի հիմնադիր անդամ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք կցանկանան միանալ նշված համատեղ հայտարարությանը, այսուհետ՝ միասին անվանվելով «Կողմեր».

- Համարելով պետության և քաղաքացիական հասարակություն համագործակցությունը կոռուպցիայի դեմ պայքարի գործում հաջողության հասնելու առանցքային գրավական,

- Կարևորելով կոռուպցիայի դեմ պայքարի գործում պետության և քաղաքացիական հասարակության միջև երկխոսության ձևավորման անհրաժեշտությունը,

- Ընդգծելով ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018թ.թ.-ի միջոցառումների ծրագրի պատշաճ կատարման անհրաժեշտությունը,

- Հաշվի առնելով կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր խնդիրների շուրջ փոխադարձ խորհրդատվության և միասնական դիրքորոշման ձևավորման անհրաժեշտությունը՝ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա իրականացման 2015-2018թ.թ.-ի միջոցառումների ծրագրով սահմանված խնդիրների և միջոցառումների վերաբերյալ.

***Կողմերը հայտարարում են համատեղ հակակոռուպցիոն աշխատանքային հարթակի և աշխատանքային խմբերի ստեղծման մասին:***

Կողմերը՝

- հայտարարում են, որ հակակոռուպցիոն աշխատանքային հարթակը (այսուհետ՝ աշխատանքային հարթակ) հանդիսանում է Կողմերի միջև ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի կատարմանն ուղղված հարցերի, քննարկման, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման համագործակցության հարթակ,
- հայտարարում են, որ աշխատանքային հարթակը բաց է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, պետական կառավարման և

տեղական ինքնակառավարման մարմինների համար, որոնք կարող են ազատ մասնակցություն ցուցաբերել հարթակի աշխատանքներին,

- հայտարարում են, որ աշխատանքային հարթակը քննարկում է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ավելի ակտիվ մասնակցության, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի պատշաճ կատարման, հակակոռուպցիոն ոլորտային գործունեության, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտի արդիական հարցեր և հիմնախնդիրներ,
- սահմանում են, որ աշխատանքային հարթակի հանդիպումները տեղի են ունենում ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ,
- պայմանավորվում են Հայաստանում ապօրինի հարստացումը քրեականացնելու և կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ համատեղ հակակոռուպցիոն 2 աշխատանքային խմբերի ստեղծման մասին,
- պայմանավորվում են, որ աշխատանքային հարթակի և աշխատանքային խմբերի աշխատանքները կազմակերպում են ՀՀ արդարադատության նախարարությունը և ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան՝ որպես աշխատանքային հարթակի և աշխատանքային խմբերի գործունեության համակարգողներ:

Պետություն - Քաղաքացիական հասարակություն հակակոռուպցիոն աշխատանքային հարթակի նախաձեռնող կառույցներ՝

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ՝ Սուրեն Քրմոյան

ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հիմնադիր անդամ և քարտուղարության համակարգող, «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ՝

Կարեն Զաղոյան

ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հիմնադիր անդամ, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ՝

Շուշան Դոյդոյան

Հայտարարությանը միանում են՝